YEREVAN STATE UNIVERSITY

BOARD OF TRUSTEES

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
СОВЕТ ПОПЕЧИТЕЛЕЙ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia հեռ.՝ (+374-60) 71-01-31, ներքին՝ 11-31, էլ. հասցե՝ www.ysu.am, board@ysu.am

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
«Երևանի պետական համալսարան»
հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի՝
2024 թ. դեկտեմբերի 25-ին տեղի ունեցած թիվ 4 նիստի

ՀՀ, ք. Երևան **25.12.2024 թ.**

2024 թվականի դեկտեմբերի 25-ին տեղի ունեցավ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի արտահերթ նիստը: Նիստին մասնակցեցին ՀՀ վարչապետի 2021 թ. հոկտեմբերի 28-ի թիվ 1222-Ա որոշմամբ հաստատված՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) 17 անդամներից 17-ը (գրանցման թերթիկը կցվում է):

Ներկայացված օրակարգը՝

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության լսում և գնահատում:
(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021-2026 թվականների ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվության լսում և գնահատում:
(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025-2030 թվականների ռազմավարական ծրագրի հաստատում:
(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

4. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում կառուցվածքային փոփոխությունների հաստատում:
(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի կառուցվածքի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

6. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի հաստիքացուցակի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի (բյուջե) հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ ռեկտորի առաջարկության հաստատում և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացում:

(զեկուցող՝ ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյան)

10. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրություն:

(զեկուցող՝ ԵՊՀ ՀԽ նախագահ Ս. Պապիկյան)

Մինչ օրակարգի հաստատմանն անցնելը՝ Խորհրդի անդամ Գ. Օհանյանը տեղեկացրեց, որ ՀԽ կազմում ուսանող 3 անդամների ներառելու համար անհրաժեշտ ընթացակարգերը պահպանվել են, սպասվում է միայն կառավարության որոշումը, որը ձգվում է արդեն ամիսներ շարունակ:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանը պարզաբանեց, որ հարցը ՀԽ գործառույթների շրջանակից դուրս է, բայց և տեղեկացրեց, որ այն ընդունվում է ի գիտություն:

Այնուհետև Խորհրդի նախագահ Ս. Պապիկյանը առաջարկեց Խորհրդի թիվ 4 նիստի օրակարգը դնել հաստատման:

Քվեարկության արդյունքներ. **կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0**: Օրակարգը հաստատվեց միաձայն:

1. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության լսում և գնահատում:**

Հարցի զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարվա հաշվետվությունը՝ անդրադառնալով կրթության, գիտության, միջազգայնացման, հաղորդակցության, ենթակառուցվածքների ու միջավայրի լավարկմանն ուղղված ծրագրերին, արձանագրած հաջողություններին, ձեռքբերումներին ու մարտահրավերներին:

Նրա խոսքով, ԵՊՀ-ն ուստարվա ընթացքում իր գործունեության բոլոր ուղղություններով կարողացել է հասնել նշանակալի հաջողությունների և արձանագրել տեսանելի արդյունքներ, որոնց վերլուծությունը հնարավորություն է տալիս շարունակելու ընթանալ վերափոխման և համակարգային բարեփոխումների ճանապարհով:

Ռեկտորն իր ելույթի ժամանակ նշեց, որ Երևանի պետական համալսարանը հայաստանյան առաջին բուհն է, որը հաշվետու ժամանակահատվածում կարողացել է ապահովել միջազգային հավատարմագրում ունեցող 4 կրթական ծրագիր, ինչը վկայում է դրանց բարձր որակի, միջազգային չափանիշներին համապատասխանելու և մրցունակ լինելու մասին: Ներկայումս համալսարանը պատրաստվում է միջազգային հավատարմագրում ունեցող կրթական ծրագրերի թիվը հասցնել 10-ի, ապա փուլային կերպով ապահովել բոլոր կրթական ծրագրերի միջազգային հավատարմագրումը:

Բացի դրանից՝ ԵՊՀ-ն շարունակել է իր համագործակցությունը աշխարհի առաջատար համալսարանների ու գիտահետազոտական կենտրոնների հետ՝ խթանելով լավագույն փորձի փոխանակումն ու համալսարանի դիրքի ամրապնդումը համաշխարհային մակարդակում:

ԵՊՀ-ն շարունակել է կատարելագործել թվային հարթակները, այդ թվում՝ «Registrar» համակարգը՝ ավելացնելով նոր գործիքներ: Այս համակարգի ամբողջական գործարկումը հնարավորություն է տալու ուսանողներին իրենց կրթությունը կազմակերպելու ճկուն և անհատական ծրագրերով՝ բավարարելով իրենց հետաքրքրությունների շրջանակը:

Հաշվետու տարին ԵՊՀ-ի համար նշանավորվել է ևս մեկ կարևոր իրադարձությամբ. համալսարանում իր գործունեությունն է սկսել ՍԹԵՄ ավագ դպրոցը: 2023-2024 ուսումնական տարում դպրոց է ընդունվել 36 դիմորդ: ԵՊՀ ավագ դպրոցն այս տարի առաջին անգամ 10-րդ դասարանի աշակերտների համար հայտարարել է 2024-2025 ուսումնական տարվա ընդունելություն՝ հասարակագիտական ուղղությամբ:

Գիտության ոլորտին ուղղված պետության ֆինանսավորման զգալի աճի և ԵՊՀ ներդրած միջոցների արդյունքում արձանագրվել են էական բարեփոխումներ: Հաշվետու ժամանակահատվածում հրապարակվել է 30 մենագրություն, 245 գիտաժողովի նյութ և 1161 հոդված: «Scopus» գիտական շտեմարանում ընդգրկված ամսագրերում հրապարակված գիտական աշխատանքների թվով ԵՊՀ-ն սահմանել է նոր ռեկորդային ցուցանիշ:

Ընթացիկ տարում միջազգային հեղինակավոր ամսագրերում հրապարակված ԵՊՀ գիտական աշխատանքների թիվը դեկտեմբերի 15-ի դրությամբ հասել է 528-ի: Աշխատանքներից 433-ը գիտական հոդվածներ են, որոնցից ավելի քան 200-ը տպագրվել են առաջին քառորդում ընդգրկված ազդեցության գործակից ունեցող ամսագրերում: Տարվա ավարտին ակնկալվում է, որ հրապարակումների թիվն ավելի է մեծանալու:

Ուսանողների և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչների ակտիվ ներգրավվածությունը գիտահետազոտական աշխատանքներում Երևանի պետական համալսարանի առաջնահերթ նպատակներից է: Այդ նպատակն իրագործելու համար համալսարանում պարբերաբար կատարվում են լսարանների և լաբորատորիաների վերանորոգման ու նորագույն սարքավորումներով համալրման աշխատանքներ, ստեղծվում նոր ենթակառուցվածքներ: Մասնավորապես, նախագծվել, վերանորոգվել և կոմունիկացիաներով է հագեցվել նոր սերվերային սենյակ, որը կահավորվել է 2 գերհզոր՝ «Nvidia DGX A100» և «Nvidia DGX H100» սերվերային համակարգիչներով: Հաշվողական համակարգերը օգտագործվում են ԵՊՀ մեքենայական ուսուցման խմբի կողմից արհեստական բանականության նոր գործիքների մշակման համար:

ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտում ստեղծվում է Օպտիկական միկրոհամակարգերի մշակման և հետազոտման գիտակրթական կենտրոն, որի նպատակն է նորագույն սարքավորումների միջոցով մշակել միջազգային չափորոշիչներին համապատասխան օպտիկական միկրոհամակարգեր, դրանց հիմքով իրականացնել նորարար հետազոտություններ, խթանել միջգիտակարգային համագործակցությունը, պատրաստել բարձր տեխնոլոգիաների ոլորտի արհեստավարժ կադրեր, ձևավորել փոխգործակցային նոր ձևաչափեր կրթության, գիտության ու արդյունաբերության միջև:

ԵՊՀ-ն բաժանորդագրվել է «EBSCO» և «JSTOR» շտեմարաններին: Այս շտեմարաններում առկա ռեսուրսները հասանելի են ԵՊՀ ներքին ցանցին միացված ցանկացած համակարգչից, այդ թվում՝ նաև Իջևանի մասնաճյուղից: Բարեփոխվել է ԵՊՀ աշխատողներին աշխատանքի որոշ տեսակների համար հատկացվող լրավճարների հաշվարկման և վճարման կարգը:

ԵՊՀ հիմնական 70 աշխատակիցների տրամադրվել է ճանապարհորդական դրամաշնորհներ: ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից Բարձր որակավորում ունեցող մասնագետների (ԲՈՈՒՄ) ներգրավման նպատակային ծրագրի շրջանակում տրամադրվող աշխատավարձի մասնակի սուբսիդավորման շրջանակներում ԵՊՀ-ից ներառվել է 2 շահառու:

ԵՊՀ ֆարմացիայի ինստիտուտի դեղերի որակի հսկման և մոնիթորինգի գիտաուսումնական կենտրոնը ստացել է պետական հավատարմագիր, ինչի արդյունքում մեր մասնագետներն իրականացնելու են դեղերի և հանքանյութերի փորձաքննություն:

Հաշվետու տարում նկատվել է համալսարանում սովորող օտարերկրյա քաղաքացիներ աճ, նախորդ՝ 2022-2023 ուստարվա համեմատ այն ավելացել է 41 % -ով, իսկ դասախոսների թիվը կրկնապատկվել է: Ընդլայնվել է նաև համագործակցության աշխարհագրությունը:

2023-2024 ուսումնական տարում համալսարանի ֆակուլտետներում, ինստիտուտներում և կենտրոններում սովորել են 484 օտարերկրյա քաղաքացիներ աշխարհի 36 երկրներից:

Հաշվետու տարում որպես հրավիրյալ դասախոսներ, գիտաշխատողներ, խորհրդատուներ և լաբորանտներ ձևակերպվել են 62 օտարերկրյա քաղաքացիներ՝ նպաստելով համալսարանի գիտակրթական միջավայրի միջազգայնացմանը, գիտական ներուժի հարստացմանը և նոր գիտելիքների ու փորձի փոխանակմանը:

2023-2024 ուսումնական տարում իրականացվել է 800 անձ/գործուղում. գործուղվել են 420 մասնագետ, 198 ուսանող և 4 ասպիրանտ: Համեմատության համար անհրաժեշտ է նշել, որ նախորդ տարի իրականացվել է 680 գործուղում:

Երևանի պետական համալսարանը բարելավել է դիրքերը աշխարհի լավագույն համալսարանները վարկանիշավորող հեղինակավոր աղյուսակներում:

«QS» վարկանիշավորման աղյուսակի նոր արդյունքների համաձայն՝ Երևանի պետական համալսարանը շարունակում է լինել հայաստանյան միակ բուհը՝ ընդգրկված լավագույնների ցանկում:

ԵՊՀ-ն առաջին անգամ ընդգրկվել է նաև «Times Higher Education»-ի կողմից վարկանիշավորված աշխարհի լավագույն համալսարանների ցանկում, ինչը վկայում է, որ ԵՊՀ գիտական արդյունքները համապատասխանում են միջազգային չափանիշներին: Ըստ «Times Higher Education»-ի վերջին տվյալների՝ ԵՊՀ-ն աշխարհում 1501+ հորիզոնականում է, ֆիզիկայի բնագավառում՝ 1001+, իսկ միջգիտակարգային վարկանիշավորմամբ՝ 601+ տեղում:

Հաշվետու ժամանակահատվածում ԵՊՀ-ն հրամանագրել է ԼՂ-ից բռնի տեղահանված ավելի քան 800 ուսանողների՝ կազմակերպելու նրանց հետագա ուսումնառությունը և ապահովելու կրթության շարունակականությունն ու անընդհատությունը, կազմակերպել սոցիալական մի շարք ծրագրեր: Նրանց ուսման վարձն ամբողջությամբ փոխհատուցելու համար ԵՊՀ-ն ֆոնդհայթայթման նպատակով դիմել է բարեկամներին ու գործընկեր կազմակերպություններին:

Արդյունքում հավաքագրվել է 99,156,900 ՀՀ դրամ: Գործընթացին մասնակցել են ԱՄՆ հայոց արևմտյան թեմը (38,675,000 ՀՀ դրամ), Հայաստանի բանկերի միությունը (35,000,000 ՀՀ դրամ), Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության Հայաստանի մասնաճյուղը (21,281,900 ՀՀ դրամ) և «Արման Տերտերյան» բարեգործական հիմնադրամը (4,200,000 ՀՀ դրամ):

Ռեկտորի խոսքով, 2023-2024 ուստարվա ընթացքում իրականացված գործողությունների ամփոփման հիման վրա կարելի է եզրակացնել, որ համալսարանում իրականացվում են կրթության, գիտահետազոտական գործունեության, ենթակառուցվածքների և միջավայրի բարելավման համակարգային ծրագրեր ու գործողություններ, որոնք հանգեցնելու են ԵՊՀ արդյունավետության խորքային լավարկմանը:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց բավարար գնահատել Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը:

Օրակարգի 1-ին հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Որոշվեց.

Լսելով 2023-2024 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության վերաբերյալ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հաշվետվությունը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ կանոնադրության 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ 2023-2024 ուսումնական տարում «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով կատարված աշխատանքների վերաբերյալ ռեկտորի հաշվետվությանը:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ 2023-2024 ուսումնական տարվա գործունեությունը գնահատել բավարար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021-2026 թվականների ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվության լսում և գնահատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ԵՊՀ 2021-2026 թթ. ռազմավարական ծրագրի հաշվետվությունը՝ ընդգծելով, որ փաստաթուղթը ոչ միայն ԵՊՀ գործունեության արդյունքների ամփոփումն է, այլև համալսարանի շարունակական զարգացման արտացոլումը: Այն պատրաստվել է 2024 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին՝ ընդգրկելով համալսարանի ակադեմիական, գիտական, կառավարման և հանրային ներգրավման ոլորտներում կատարված հիմնական աշխատանքները, առաջընթացը և առկա մարտահրավերները: Նրա խոսքով, հաշվետվության հիմքում ԵՊՀ ռազմավարական ծրագրի իրականացման ընթացքում գրանցված փաստացի արդյունքներն են: Գնահատման գործընթացը ներառել է մի շարք աղբյուրների ուսումնասիրում, մասնավորապես՝

- ռազմավարության ժամանակահատվածն ընդգրկող ուսումնական տարիների ԵՊՀ հաշվետվություններ,
- տարեկան կտրվածքով իրականացված ռազմավարության մշտադիտարկման արդյունքներ,
- ԵՊՀ ստորաբաժանումների տարեկան գործողությունների պլաններ,
- ուսումնական ստորաբաժանումների ղեկավարների հաշվետվություններ,
- ԵՊՀ գիտական խորհրդի որոշումներ,
- ԵՊՀ տվյալների հավաքագրման և պահպանման էլեկտրոնային հարթակներ (supervision, intranet),
- լրատվական հրապարակումներ ԵՊՀ գործունեության վերաբերյալ,
- ներքին փաստաթղթեր՝ կարգեր, հրամաններ, կրթական ծրագրեր և այլ ընթացակարգային նյութեր:

Այս ամբողջ տվյալները համադրելով՝ հնարավոր է դարձել ամբողջական պատկերացում կազմել ռազմավարության իրականացման ընթացքի մասին, տեսնել ձեռքբերումներն ու բացթողումները, ինչպես նաև գնահատել համալսարանի դիրքը՝ համեմատելով նախանշված նպատակներն իրական արդյունքների հետ:2024թ. նոյեմբերի դրությամբ ռազմավարական ծրագրով նախատեսված գործողությունների ավելի քան 70%-ն ամբողջությամբ իրականացվել է, իսկ 15%-ը՝ ընթացքի մեջ է: Իրականացված գործողությունները ներառում են կրթական ծրագրերի արդիականացում, միջազգային հավատարմագրումներ, նոր ուսումնական լաբորատորիաների ստեղծում, դասախոսական անձնակազմի վերապատրաստում, ուսանողների աջակցման ծրագրեր, ժամանակակից տեխնոլոգիաների ինտեգրում կրթական միջավայր և այլն: Սակայն, ծրագրով նախատեսված որոշ գործողություններ չեն իրականացվել, ինչը բնական է նման մասշտաբային նախաձեռնությունների համար: Չիրականացված գործողությունները կարելի է բաժանել երկու խմբի. առաջինն այն գործողություններն են, որոնք կորցրել են

արդիականությունը՝ հաշվի առնելով առաջնահերթությունների հստակեցումը ինչպես կրթական, այնպես էլ գիտական միջավայրերում (օրինակ՝ կենտրոնացված գիտական լաբորատոր ենթակառուցվածք ստեղծելը), իսկ մյուսը չիրականացված գործողությունների այն խումբն է, որոնք շարունակում են հանդիսանալ առաջնահերթություն, և ներառվել են ռազմավարական նոր ծրագրում (օրինակ՝ աշխատաշուկայի համապարփակ ուսումնասիրման իրականացումը): Հաշվի առնելով գրանցված առաջընթացը և բարձրագույն կրթության ոլորտում տեղի ունեցող զարգացումները, ակնհայտ է դարձել, որ ԵՊՀ հետագա առաջընթացի համար անհրաժեշտ է ձևավորել նոր՝ ավելի ճկուն և համապարփակ ռազմավարություն, որը կկարողանա արձագանքել ոչ միայն ներկա, այլև ապագա մարտահրավերներին:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հավանություն Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021-2026 թվականների ռազմավարական ծրագրի կատարման հաշվետվությունը:

Օրակարգի 2-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Լսելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021-2026 թվականների զարգացման ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի հաշվետվությունը և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի՝ կանոնադրության 43-րդ կետի 4-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հավանություն տալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2021-2026 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման վերաբերյալ ռեկտորի հաշ-վետվությանը և այն գնահատել բավարար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

3. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025-2030 թվականների ռազմավարական ծրագրի հաստատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ զարգացման ռազմավարական նոր ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով, որոնք էականորեն ազդել են գիտակրթական միջավայրի վրա: Նոր ռազմավարության մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2020-2024 թթ. ընթացքում իրականացված գործողություններն ու ծրագրերը, հաճախ հանդիսանալով փոփոխված իրավիճակին արձագանք, դուրս էին գործող ռազմավարությամբ սահմանված թիրախների ու առաջնահերթությունների շրջանակից և առաջացնում էին հաշվետվողականության լրացուցիչ գործիքների անհրաժեշտություն:

Ռազմավարության մշակման հիմքում ընկած են եղել մի շարք հիմնարար սկզբունքներ, որոնց շնորհիվ ակնկալվում է ունենալ իրական կարիքներին արձագանքող և բարձր չափելիության հնարավորություն ընձեռող փաստաթուղթ: Այս սկզբունքներից ամենաառանցքայինները մասնակցայնությունն ու տվյալահենությունն են: Ուստի, ռազմավարության մշակման ընթացքում իրականացվել է ինչպես համապարփակ

տվյալների վերլուծություն, այնպես էլ մշակվել և գործարկվել են ձևաչափեր, որոնց միջոցով հնարավոր է դարձել ներգրավել և՛ ներքին, և՛ արտաքին շահառուներին:

Ռեկտորի խոսքով, ԵՊՀ 2025-2030 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը ներառում է համալսարանի առաքելությունը, զարգացման տեսլականը, հիմնարար արժեքները, ռազմավարական նպատակները և համապատասխան խնդիրների ձևակերպումներն ու գործողությունների տեսակները, ինչպես նաև որպես ռազմավարության հավելվածներ ներկայացված են ռազմավարության իրականացման ընթացիկ կառավարման և մշտադիտարկման սկզբունքները, ռիսկերի կանխատեսման և կառավարման մոտեցումները, ռազմավարության ֆինանսական կառավարման քաղաքականությունը և գործողությունների վեցամյա պլանը:

Ռազմավարական նպատակներ են սահմանվել՝

- Կրթության բովանդակության ու մեթոդաբանության արդիականացում,
- Գիտահետազոտական արդյունքի բարելավում,
- Միջավայրի և ենթակառուցվածքների համապատասխանեցում համալսարանական շահառու բոլոր խմբերի պահանջներին,
- Մարդկային ռեսուրսի զարգացում և համալրում,
- Կառավարման համակարգի արդիականացում, որոշումների կայացման և իրագործման արդյունավետության բարձրացում,
- Արտաքին միջավայրի հետ ինտեգրում և ներդաշնակեցում:

ԵՊՀ 2025-2030 ռազմավարական ծրագրի վեց նպատակները համապարփակ կերպով արտացոլում են համալսարանի զարգացման առանցքային ուղղությունները՝ կրթության, գիտահետազոտական գործունեության, միջավայրի, մարդկային ռեսուրսների զարգացման, կառավարման և արտաքին համագործակցության ոլորտներում: Յուրաքանչյուր նպատակ ուղղված է համալսարանի առաքելության իրականացմանը և տեսլականի հետապնդմանը՝ արձագանքելով ժամանակակից մարտահրավերներին և շահառուների կարիքներին: Այս ռազմավարությունը հնարավորություն կտա ԵՊՀ-ին դառնալու ավելի մրցունակ, նորարար և ազդեցիկ՝ ներդրում ունենալով ինչպես ազգային, այնպես էլ միջազգային կրթական և գիտական առաջընթացում:

ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն ասաց, որ զարգացման ռազմավարական ծրագիրն այն փաստաթուղթն է, որով պետք է հստակ լինի, թե ինչ նշաձող է սահմանվում, և թե ինչ ուղիներ են նախանշված դրանց հասնելու համար: Ս. Պապիկյանի խոսքով, կարևոր է նաև, որ ԵՊՀ-ում գործի կադրերի համալրման մրցակցային մեխանիզմ: Ըստ նրա՝ մրցակցության դեպքում միայն աշխատակիցները շարունակաբար կկատարելագործեն իրենց գիտելիքներն ու հմտությունները՝ ապահովելով կրթության որակի աճ:

ԵՊՀ ՀԽ քարտուղար Եղիշե Կիրակոսյանն էլ նշեց, որ անհրաժեշտ է ուշադրության կենտրոնում պահել նաև ոլորտային զարգացման ռազմավարությունների մշակումը, գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի խոսքով էլ, անհրաժեշտ է հստակ հետևել զարգացման ռազմավարական ծրագրի նպատակներից ու խնդիրներից բխող գործողությունների կատարմանն ու գնահատմանը՝ դրանց իրականացման վերաբերյալ ներկայացնելով պարբերական հաշվետվություններ:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025-2030 թվականների ռազմավարական ծրագիրը:

Օրակարգի 3-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 5-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել ««Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025-2030 թվականների զարգացման ռազմավարական ծրագիրը»՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

4. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամում կառուցվածքային փոփոխությունների հաստատում:**

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց առաջարկվող կառուցվածքային ստորաբաժանումները, որոնք հավանության են արժանացել ԵՊՀ և ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդների կողմից:

Նա նշեց, որ առաջարկվող փոփոխությունների հիմնական մասը վերաբերվում է Ֆիզիկայի ինստիտուտին: Ինստիտուտի կառավարման համակարգը պարզեցնելու նպատակով նախատեսվում է ձևավորել 7 ամբիոն: Դրանցից յուրաքանչյուրը բովանդակային առումով կներկայացնի ֆիզիկայի որոշակի ոլորտ՝ ներառելով նշված ոլորտին համապատասխանող գիտական լաբորատորիաները՝ մասնակցելով բակալավրիատի ու մագիստրատուրայի կրթական ծրագրերի ձեւավորմանն ու ուսումնական գործընթացի իրականացմանը:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամում կառուցվածքային փոփոխությունները:

Օրակարգի 4-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի գիտական խորհրդի և ռեկտորի առաջարկությունները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Լուծարել ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի «Օպտիկայի ամբիոն», «Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբիոն», «Հեռահաղորդակցության և ազդանշանների մշակման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները:
2. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի «Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Ակադեմիկոս

Գուրգեն Սահակյանի անվան տեսական ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի ամբիոն»:

3. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի «Մոլեկուլային ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Պինդ մարմնի ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Կոնդենսացված վիճակի ֆիզիկայի ամբիոն»:

4. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի «Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Կիրառական էլեկտրադինամիկայի և մոդելավորման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոն»:

5. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի «Միջուկային ֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը միաձուլել (վերակազմակերպել) «Ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի անվան ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման հետ և վերակազմակերպված ստորաբաժանումն անվանել «Միջուկային ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբիոն»:

6. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի կազմում ստեղծել «Օպտիկայի և ֆոտոնիկայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

7. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի կազմում ստեղծել «Նյութագիտության և նանոտեխնոլոգիաների ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

8. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի կազմում ստեղծել «Ֆիզիկական պրոցեսների մոդելավորման և ազդանշանների մշակման ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը:

9. ԵՊՀ ֆիզիկայի ինստիտուտի «Ֆիզիկայի գիտահետազոտական ինստիտուտ» կառուցվածքային ստորաբաժանման կազմում ստեղծել՝

1) «Տեսական և մաթեմատիկական ֆիզիկայի գիտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և նրա կազմում ընդգրկել հետևյալ ենթաստորաբաժանումները.

ա. Տեսական ֆիզիկայի լաբորատորիա,

բ. Քվանտային երևույթների հետազոտման և մոդելավորման լաբորատորիա,

գ. Գերխիտ աստղերի ֆիզիկայի լաբորատորիա,

2) «Կոնդենսացված վիճակի ֆիզիկայի գիտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և նրա կազմում ընդգրկել հետևյալ ենթաստորաբաժանումները.

ա. Մակրոմոլեկուլների ֆիզիկայի լաբորատորիա,

բ. Պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիա,

գ. Նանոկառուցվածքների մոդելավորման և սիմուլիացիաների խումբ,

դ. Նուկլեինաթթուների և պոլիէլեկտորիլիտային բազմաշերտերի կառուցվածքային ու կենսաֆիզիկական հետազոտությունների խումբ,

3) «Ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության գիտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և նրա կազմում ընդգրկել հետևյալ ենթաստորաբաժանումները.

ա. Ենթամիլիմետրային ալիքների լաբորատորիա,

բ. Նանոպլազմոնիկայի լաբորատորիա,

գ. Ֆիզիկատեխնիկական հետազոտությունների լաբորատորիա,

4) «Օպտիկայի և ֆոտոնիկայի գիտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և

նրա կազմում ընդգրկել հետևյալ ենթաստորաբաժանումները.
ա. Օպտոէլեկտրոնիկայի և ֆոտոնիկայի լաբորատորիա,
բ. Գերարագ օպտիկայի և ֆոտոնիկայի լաբորատորիա,
գ. Ֆոտոնիկայի և արհեստական բանականության լաբորատորիա,
դ. Օպտիկական միկրոհամակարգերի մոդելավորման և միկրոմշակման խումբ,
5) «Միջուկային ֆիզիկայի և աստղաֆիզիկայի գիտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և նրա կազմում ընդգրկել հետևյալ ենթաստորաբաժանումները.
ա. Հեռանկարային հետազոտությունների միջազգային կենտրոն,
բ. Աստղաֆիզիկական հետազոտությունների լաբորատորիա,
գ. Աստղամասնիկների ֆիզիկայի խումբ,
6) «Նյութագիտության և նանոտեխնոլոգիաների գիտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը և նրա կազմում ընդգրկել հետևյալ ենթաստորաբաժանումները.
ա. Հաշվարկային նյութագիտության լաբորատորիա,
բ. Առաջադեմ ֆունկցիոնալ մատերիալների լաբորատորիա:
10. Աստվածաբանության ֆակուլտետի «Հումանիտար հետազոտությունների ինստիտուտ» կառուցվածքային ստորաբաժանման կազմում ստեղծել «Հայրենագիտական հետազոտությունների խումբ» ենթաստորաբաժանումը:
11. Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի «Հոգեբանության գիտահետազոտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման կազմում ստեղծել «Հանրային գործընթացների հոգեբանական ուսումնասիրությունների խումբ» ենթաստորաբաժանումը:
12. Ֆարմացիայի ինստիտուտի «Ֆարմացիայի գիտահետազոտական կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանման կազմում ստեղծել «Ասիմետրիկ սինթեզի խումբ» և «Բժշկակենսաբանական սքրինինգի խումբ» ենթաստորբաժանումները:
13. Ստեղծել «Ժողովրդագրական հետազոտությունների կենտրոն» կառուցվածքային ստորաբաժանումը:
14. Ստեղծել «Իրավաբանական լաբորատորիա» կառուցվածքային ստորաբաժանումը:
15. Սահմանել, որ սույն որոշման 1-9-րդ կետերով կատարված փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2025 թ. հուլիսի 1-ից:
16. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

5. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի կառուցվածքի հաստատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ԵՊՀ կառուցվածքը:
Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հաստատել այն:

Օրակարգի 5-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի կառուցվածքը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

6. **«Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի հաստիքացուցակի հաստատում:**

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց ԵՊՀ հաստիքացուցակը՝ նշելով, որ փոփոխություններ գրեթե չկան: Ավելացվել է միայն ԵՊՀ գրադարանի փոխտնօրենի հաստիքը:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի հաստիքացուցակը:

Օրակարգի 6-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 6-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը **որոշում է**.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի հաստիքացուցակը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

7. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշվի (բյուջե) հաստատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը, ներկայացնելով 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը, նշեց, որ այն դեֆիցիտային է, դեֆիցիտը կազմում է 619 միլիոն դրամ: Դեֆիցիտը պայմանավորված է 2024 թ. տարեվերջին ստացված դրամաշնորհային ծրագրերի ֆինանսավորումներով, որոնց գծով պարտավորությունները անհրաժեշտ է իրականացնել գալիք 2025 թ. ընթացքում: Դեֆիցիտի լրացման աղբյուրը նախորդ տարում ստացված և չծախսված դրամական միջոցների մնացորդն է:

2025 թ. նախահաշվի համախառն եկամուտները նախորդ տարվա համեմատ կավելանան շուրջ 8.2, իսկ ծախսերը՝ 9.4 տոկոսով:

Հ. Հովհաննիսյանը ներկայացրեց նաև ֆինանսական մուտքերն ու ծախսերը՝ ըստ նախահաշվի:

Բյուջեի վերաբերյալ քննարկումների ժամանակ ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանն առաջարկեց առաջիկայում փոխել խնայողությունների վերաբերյալ որդեգրած քաղաքականությունը՝ կատարելով գուցե ռիսկային, բայց և ավելի արդյունավետ ներդրումներ:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (բյուջե):

Օրակարգի 7-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 8-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի 2025 թվականի եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը (բյուջեն)՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հունվարի 1-ից:

8. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերի հաստատում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանը, ներկայացնելով ՀԽ հաստատմանը ներկայացվող պայմանագրերը, նշեց, որ դրանց թվում են նաև պետության կողմից բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ, 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների 2024/2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման նպատակով, օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդման վերաբերյալ, ինչպես նաև պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության օգտագործման վերաբերյալ պայմանագրերը:

Խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանն առաջարկեց հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից կնքված մեկ հարյուր միլիոն ՀՀ դրամի սահմանաչափը գերազանցող պայմանագրերը:

Օրակարգի 8-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 20-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել պետության կողմից բարձրագույն մասնագիտական կրթության գծով ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի փոխհատուցման վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված թիվ 094102-4/24 պայմանագիրը:
2. Հաստատել 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ուսանողների 2024/2025 ուսումնական տարվա 1-ին

կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման նպատակով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված թիվ 1111-12011/01 նվիրաբերության պայմանագիրը:

3. Հաստատել օտարերկրյա պետություններում հայերենի և հայագիտական առարկաների դասավանդման վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված թիվ 09.06.01.31 պայմանագիրը:
4. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված թիվ 043-23 բանկային ավանդի պայմանագիրը:
5. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված թիվ 2599956001 բանկային ավանդի պայմանագիրը:
6. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի թիվ AMGB20172327 արժեթղթի տարբերակիչ ծածկագրով պետական պարտատոմսերի ձեռքբերման հավելվածը:
7. Հաստատել թիվ 10-3/24-I/YSU-PHYS ծրագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության օգտագործման վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված պայմանագիրը:
8. Հաստատել թիվ 10-3/24-I/YSU-BIOL ծրագրով գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանման ու զարգացման ծրագրի իրականացման համար պետության կողմից դրամաշնորհի ձևով տրամադրվող ֆինանսական աջակցության օգտագործման վերաբերյալ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հետ կնքված պայմանագիրը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

9. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված տարածքների մի մասի վարձակալության տրամադրման վերաբերյալ ռեկտորի առաջարկության հաստատում և ՀՀ ՏԿԵՆ պետական գույքի կառավարման կոմիտե հայտի ներկայացում:

Զեկուցող ԵՊՀ ռեկտոր Հ. Հովհաննիսյանը ՀԽ հաստատմանը ներկայացրեց Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող տարածքի մի մասը (23.5 քմ.) վարձակալության տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը՝ հայտ ներկայացնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե: Նրա խոսքով, գործընթացի նպատակը ԵՊՀ կենտրոնական մասնաշենքում հուշանվերների խանութի ստեղծումն է:

Օրակարգի 9-րդ հարցի քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 2:**

Որոշվեց.

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի թիվ 914-Ն որոշմամբ հաստատված «Պետական ոչ առևտրային կազմակերպություններին, պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպություններին և հիմնադրամներին անհատույց օգտագործման իրավունքով տրամադրված պետական սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության տրամադրման կարգի» 4-րդ կետով և «Երևանի

պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 23-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ռեկտորի՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամին անհատույց օգտագործման իրավունքով հանձնված՝ Երևան քաղաքի Ալեք Մանուկյան 1 հասցեում գտնվող տարածքի մի մասը (23.5 քմ.) վարձակալության տրամադրելու վերաբերյալ առաջարկությունը և հայտ ներկայացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտե:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

10. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրություն:

Զեկուցող ԵՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ Սուրեն Պապիկյանը նշեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար նախապես հայտարարված մրցույթին մասնակցելու նպատակով ստացվել է մեկ հայտ Միեր Օթարյանի կողմից: Ապա առաջարկեց հաստատել հավակնորդի՝ ԵՊՀ ԻՄ տնօրենի ընտրության կանոնակարգով նախատեսված պահանջներին համապատասխանությանը հարցը:

Քվեարկության արդյունքները. **կողմ՝ 17, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:**

Այնուհետև ԵՊՀ ԻՄ տնօրենի թեկնածու Միեր Օթարյանը, ներկայացնելով ԻՄ զարգացման իր ծրագիրը, ընդգծեց, որ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը պետք է շարունակի պատրաստել որակյալ գիտամանկավարժական կադրեր ինչպես Տավուշի մարզի, այնպես էլ ողջ հանրապետության համար:

Նրա համոզմամբ, ԻՄ-ն մարզային կրթական կենտրոն է, և անհրաժեշտ է ծրագրերը դարձնել ավելի ճկուն, իսկ դասընթացներն անցկացնել նորարարական մեթոդներով: Ըստ նրա՝ պետք է զարգացնել նյութատեխնիկական և տեղեկատվական ապահովվածությունը, խթանել ակադեմիական շարժունակությունը, ինչպես նաև ընդլայնել գիտակրթական ու մշակութային կապերը այլ ուսումնական հաստատությունների հետ:

Մ. Օթարյանի խոսքով, անհրաժեշտ է ներդնել որակի ապահովման վերահսկման արդիական համակարգ: Սահմանափակ ռեսուրսների պայմաններում կառավարման համակարգի արդյունավետության շարունակական բարելավումը ևս առանցքային նշանակություն ունի:

Ելույթից հետո ՀԽ անդամները հարցեր հղեցին Մ. Օթարյանին:

Ընտրության նպատակով ընտրվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ կազմով՝

1. Եղիշե Կիրակոսյան (նախագահ),
2. Հասմիկ Հովհաննիսյան (քարտուղար),
3. Արթուր Մարտիրոսյան,
4. Հայկ Քոչարյան,
5. Հովհաննես Մովսիսյան:

Ապա հայտարարվեց փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությանը մասնակցել են Խորհրդի 17 անդամներ, բաժանվել է 17 քվեաթերթիկ:

Քվեարկության արդյունքները. **կողմ՝ 15, դեմ՝ 2, անվավեր՝ 0:**

Որոշվեց.

Հիմք ընդունելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրենի ընտրության նպատակով անցկացված փակ, գաղտնի քվեարկության արդյունքները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 43-րդ կետի 3-րդ ենթակետով՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը որոշում է.

1. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի Իջևանի մասնաճյուղի տնօրեն ընտրել տնտեսագիտության թեկնածու Միեր Մերուժանի Օթարյանին (ՀԾՀ 2402950625) հինգ տարի ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Խորհրդի նախագահ՝ **Ս. Պապիկյան**

Խորհրդի քարտուղար՝ **Ե. Կիրակոսյան**